յունների համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ «Վորլդ Վիժն»-ի միջեւ մեկ տասնամյակից ավելի պատմություն ունեցող համագործակցությանը եւ արձանագրված հաջողություններին: Նորին Սրբությունը մասնավոր գոհունակություն հայտնեց, որ Հայ Եկեղեցու տարբեր կառույցների եւ «Վորլդ Վիժն»-ի համատեղ աշխատանքները հատկապես ուղղված են մանուկների քրիստոնեական դաստիարակությանը:

«Վորլդ Վիժն»-ի ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, ընդգծեցին, որ Հայոց Եկեղեցին կարեւոր գործընկեր է կազմակերպության առաքելության իրականացման գործում: «Վորլդ Վիժն»-ի պատասխանատուները ներկայացրեցին Հայաստան այցի իրենց դրական տպավորությունները, անդրադարձան երիտասարդների համար իրականացվող աշխատանքների կարեւորությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ երիտասարդության առջեւ ծառացած մարտահրավերների եւ մանուկների կրթության ու դաստիարակության խնդիրների մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ԵՐԳԱՀԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Սիրելիներ,

Աղոթական զգացումներով հավաքվել ենք քաղաքամայր Երեւանի Սուրբ Հովհաննես եկեղեցում՝ հրաժեշտ տալու անվանի երգահան, դաշնակահար, մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, ի Տեր հանգուցյալ Ալեքսանդր Հարությունյանին:

Հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ Մեր սրտակցությունն ու վշտակցությունն ենք բերում հանգուցյալի այրուն՝ տիկին Իրինային, զավակներին, ընտանիքի հարազատներին եւ բոլոր սգացյալներին:

Ջերմությամբ ենք անդրադառնում ննջեցյալի կյանքին ու գործունեությանը, որը լուսավոր հետագիծ է թողել հայ մշակույթի ու արվեստի երկնակամարում եւ մշտավառ հիշողություն՝ հայորդյաց սրտերում: Լուսահոգի Ալեքսանդր Հարությունյանը իր բարձրարվեստ ստեղծագործություններով արժանացել է երաժշտասեր լայն հասարակության մեծ սիրուն եւ հիացմունքին: Նրա երաժշտական գործերը յուրահատուկ մեղեդայնությամբ ու ներդաշնակությամբ արտահայտում են մեր ժողովրդի առ Հայրենին սերը, վեհ զգացումներն ու ներաշխարհի հույզերը: Բարեհիշատակ Ալեքսանդր Հարությունյանի բազմաժանր եւ ինքնատիպ ստեղծագործությունները ջերմ արձագանք են գտել նաեւ աշխարհի տարբեր երկրներում: Գովարժան են հանգուցյալի վաստակն ու ձեռքբերումները մանկավարժութ-

յան ասպարեզում: Նա եռանդուն ջանքեր է բերել երաժիշտների նոր սերնդի կրթության ու պատրաստության գործին՝ երկար տարիներ դասավանդելով և իր գիտելիքներն ու փորձը փոխանցելով Երևանի կոնսերվատորիայի սաներին:

Շնորհաշատ երգահանի տաղանդը արգասավորվել է նաև եկեղեցական երաժշտության ասպարեզում: Երջանկահիշատակ Վազգեն Ա. Կաթողիկոսի ծննդյան 60-ամյակին նվիրված օրհներգով, հոգեհանգստյան «Գթա, Տէր» շարականի մշակումով հոգելույս Ալեքսանդր Հարությունյանը արտահայտել է իր մշտավառ հավատքը և որդիական սերն ու հարգանքը հանդեպ Հայ Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Եկեղեցական երաժշտության բացառիկ այս նմուշները նրա սրտից բխած հուզառատ աղոթք են առ Բարձրյալն Աստված:

Մեծապես գնահատելով հոգելույս Ալեքսանդր Հարությունյանի զգալի ներդրումն ու վաստակը երաժշտության և հայ մշակույթի անդաստանում՝ Մենք ուրախությունն ունեցանք Հայրապետական սրբատառ Կոնդակով նրան շնորհելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանը:

Սիրելի սգակիր հարազատներ և ներկաներ, այսօր մեր աղոթքներով երկրային այս իրականությունից դեպի հավերժություն ենք ուղեկցում մեր ժողովրդի պանծալի զավակին: Հավատում ենք, որ աստվածահաճո ընթացքի ու գործերի համար լուսահոգի Ալեքսանդր Հարությունյանը պիտի արժանանա երկնքի արքայության երանավետ հանգստին ու խաղաղությանը, քանզի «Աստված շնորհել է մեզ հավիտենական կյանքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (հմմտ. Հռ. Զ. 23):

Հոգեհանգստի արարողության այս նվիրական պահին ի խորոց սրտի աղոթում ենք, որ Բարեգութ Տերը երկնի լուսեղեն խորաններում քաղցրությամբ ընդունի հոգին նորոգ հանգուցյալ Ալեքսանդր Հարությունյանի և Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփոփանքը շնորհի ննջեցյալի հարազատներին՝ սիրելի այրուն, զավակներին և բոլոր վշտացյալներին:

«Հոգիդ ճշմարիտ, մխիթարիչ սգաւորաց, մի՛ անտես առներ զննջեցեալս մեր, այլ հանգո՛ զհոգի նորա ընդ սուրբս Քո. ամէն»:

Աղոթք և օրհնություն հանգուցյալ Ալեքսանդր Հարությունյանի լույս հիշատակին: